Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
մարտի 28-ի N 369 - Ն որոշման

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցող կազմակերպությունը (այսուհետ՝ դիմումատու) Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն դիմումին կից ներկայացվող ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները ներկայացնում է սույն պահանջներին համապատասխան:

2. Դիմումատուն լիազոր մարմին է ներկայացնում՝

1) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) պահանջվող ինժեներատեխնիկական կազմի առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի, իսկ համապատասխան մասնագետների հետ կնքված պայմանագրերի դեպքում՝ նաև համապատասխան պայմանագրերի պատճենները.

2) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ՝

ա. տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի, իսկ օրենքով սահմանված կարգով օգտագործման իրավունքով պատկանող տեխնիկական միջոցի համար՝ նաև համապատասխան պայմանագրի պատճենը,

բ. ֆինանսական միջոցների մասին տեղեկանք՝ համաձայն N 3 ձևի, իսկ տրամադրված վարկային գծի կամ բանկային երաշխիքի, կամ ֆինանսական միջոցների փոխառության առկայության դեպքում՝ նաև համապատասխան ֆինանսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

13_0369

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Մասնագետի անունը, ազգանունը	Որակավորումը	Մասնագիտական աշխատանքի փորձը	Նախկինում կատարած աշխատանքի անվանումը
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ _____ ինժեներատեխնիկական կազմը հավաստող աշխատանքային պայմանագրերի պատճենները:

_____ _____

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ Մ Ա Ս Ի Ն

NN ը/կ	Տեխնիկական միջոցի անվանումը	Քանակը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը	Տեխնիկական միջոցի տեխնիկական վիճակը (սարքին է կամ ենթակա է վերանորոգման)
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ _____ տեխնիկական միջոցների նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող պայմանագրերի պատճենները:

_____ _____

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.

Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԿԱՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____-ը հավաստում է, որ իր
(կազմակերպության անվանումը)

ֆինանսական միջոցները_____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

դրությամբ կազմում են _____ դրամ:

Կից ներկայացնում եմ _____ ֆինանսական կազմակերպության հետ կնքված վարկային գծի տրամադրման կամ բանկային երաշխիքի, կամ ներգրավված ֆինանսական միջոցների փոխառության մասին պայմանագրի պատճենը:

_____ _____
(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

_____ _____20 թ.